ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ, «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը.

Սահմանադրության 164-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դատավորի համար սահմանվում է նրա բարձր կարգավիճակին և պատասխանատվությանը համապատասխանող վարձատրություն: Տվյալ սահմանադրական պահանջը միտված է ապահովելու դատական իշխանության ներկայացուցիչների՝ այդ թվում՝ Սահմանադրական դատարանի դատավորների, նյութական անկախությունը և ծառայողական գործունեության արդյունավետ իրականացումը:

Սահմանադրական դատարանի դատավորների վարձատրության հետ կապված հարաբերությունները ներկայումս կարգավորվում են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք): Սակայն օրենքի դրույթների վերլուծությունը և դրանց կիրառման պրակտիկան ցույց են տալիս, որ Սահմանադրական դատարանի դատավորների վարձատրությունը՝ իր կառուցվածքով և չափերով, համարժեք չէ վերջիններիս բարձր իրավական կարգավիճակին, սահմանադրական լիազորությունների ծավալին և գործունեության համար բնորոշ բարձր պատասխանատվության աստիճանին:

Արդյունքում, առաջացել է օբյեկտիվ անհրաժեշտություն՝ վերանայելու Սահմանադրական դատարանի դատավորների վարձատրության կառուցվածքը և սահմանելու լրացուցիչ աշխատավարձի տարբերակված համակարգ: Նման համակարգի ներդրումը նպատակ ունի# ապահովել սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի լիարժեք անկախությունը, նվազեցնել դատավորների նկատմամբ արտաքին ազդեցությունների հնարավորությունը և ամրապնդել Սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ կայունությունն ու գործառնական արդյունավետությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ մշակվել են սույն նախագծերը (այսուհետ՝ Նախագծեր), որոնց նպատակն է՝ սահմանել Սահմանադրական դատարանի դատավորների համար լրացուցիչ նյութական երաշխիքներ՝ այդ կերպ ապահովելով Սահմանադրական դատարանի նախագահի, փոխնախագահի, դատավորի կարգավիճակին ու պատասխանատվությանը համարժեք վարձատրություն՝ Սահմանադրության 164-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված սկզբունքների շրջանակում:

2. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Դատավորի համար, Սահմանադրության 164-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն, սահմանվում է նրա բարձր կարգավիճակին և պատասխանատվությանը համապատասխանող

վարձատրություն: Սահմանադրական դատարանի նախագահի, փոխնախագահի և դատավորների վարձատրության, այդ թվում՝ հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի հաշվարկների և չափերի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են օրենքով:

Սահմանադրական դատարանի դատավորների գործունեության երաշխիքները կարգավորող օրենքը «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքն է (այսուհետ՝ Օրենք): Մասնավորապես, Օրենքի 12-րդ հոդվածով սահմանվում են Սահմանադրական դատարանի նախագահի, փոխնախագահի և դատավորների (այսուհետ՝ նաև Սահմանադրական դատարանի դատավորներ)՝ պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հաշվարկվող հավելավճարները, իսկ Օ

ր

ե Սահմանադրական դատարանի դատավորների վարձատրության իրավահարաբերությունները կարգավորող Օրենքի դրույթների համակարգային վերլուծությունից բխում է, որ վարձատրությունն իր մեջ ներառում է հիմնական աշխատավարձը, լրացուցիչ աշխատավարձը (ներառում է հավելումը, հավելավճարը) և պարգևատրումը: Միևնույն ժամանակ, Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ձևակերպումից պարզ է դառնում, որ պաշտոնային դրույքաչափը Օրենքի իմաստով հիմնական աշխատավարձն է:

- Սահմանադրական դատարանի դատավորների պաշտոնային դրույքաչափերի գործակիցների նկատմամբ նոր հավելավճարների սահմանման անհրաժեշտությունը պայմանավորված է դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակով և առանձնահատուկ լիազորությունների շրջանակով: Մասնավորապես, Սահմանադրության 7-րդ գլխի կարգավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Սահմանադրական դատարանի լիազորությունների շրջանակը էականորեն տարբերվում է Սահմանադրության 163-րդ հոդվածով ամրագրված մյուս դատարանների լիազորությունների շրջանակից: Նշվածն արտացոլված է Սահմանադրության 168-րդ հոդվածով ամրագրված՝ Սահմանադրական դատարանի լիազորությունների շրջանակում:

վ Որպես սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմին՝ Սահմանադրական դատարանի լիազորություններն առնչվում են տարաբնույթ և իրավական պետության համար կարևորագույն նշանակություն ունեցող ոլորտների հետ (նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության ստուգում, սահմանադրական մարմինների միջև վեճերի լուծում, հանրաքվեի, ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճեր և այլն):

Անդրադառնալով դատավորներին տրամադրվող նյութական և սոցիալական երաշխիքներին, Եվրոպայի խորհրդի շրջանակներում 1998 թվականին ընդունված «Դատավորների կարգավիճակի մասին» եվրոպական խարտիայի 6.2-րդ կետի համաձայն՝ դատավորի վարձատրության չափը մյուս դատավորի վարձատրության համեմատությամբ կարող է փոփոխվել կախված ծառայության տևողությունից, **իրենց կողմից կատարվող պարտականությունների բնույթից և իրենց վրա դրված առաջադրանքների**

ն

ա

կարևորությունից: Այսինքն, սկզբունքային մոտեցումն այն է, որ դատավորի վարձատրության չափը կարող է պայմանավորվել պարտականությունների և լիազորությունների կարևորությամբ: Ուստի, հաշվի առնելով Սահմանադրական դատարանի դատավորների բացառիկ և վճռորոշ լիազորությունների շրջանակը, միջազգային մակարդակով ևս ճանաչվում է նրանց բարձր կարգավիճակին և դերակատարմանը համապատասխան վարձատրության չափի սահմանումը:

Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանի կարգավիճակի առանձնահատկությունը ամփոփված է սահմանադրական վերահսկողության գաղափարում, համաձայն որի, ի տարբերություն Հայաստանի Հանրապետությունում բոլոր այլ դատական ատյանների, որոնք արդարադատության իրականացման ընթացքում չեն կարող դուրս գալ օրենսդրի կամքի շրջանակից, Սահմանադրական դատարանն իր գործունեությամբ ենթարկվում է միայն Սահմանադրությանը և միակ իրավասու ատյանն է, որն ի զորու է անվավեր ճանաչել օրենսդրի ընդունած իրավական ակտը:

Միաժամանակ, հաշվի առնելով Սահմանադրական դատարանի դատավորի կարգավիճակին և պատասխանատվությանը համահունչ լրացուցիչ աշխատավարձի մաս կազմող հավելավճարի չափի փոփոխության անհրաժեշտությունը, հարկ է նկատել, որ կենսաթոշակի իրավունքի պատշաճ իրացումը ևս պայմանավորված է հավելավճարով: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ Դատավորների անկախության, արդյունավետության և պատասխանատվության վերաբերյալ 2010 թվականի նոյեմբերի 17-ի թիվ Rec (2010)12 հանձնարարականի 54-րդ կետը սահմանում է, որ դատավորի կենսաթոշակը պետք է ողջամիտ հարաբերակցության մեջ գտնվի նրա ստացած աշխատավարձի հետ: Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանը 2006 թվականի սեպտեմբերի 20-ի ՍԴՈ-647 որոշմամբ կարևորել է դատավորի սոցիալական ապահովության իրավունքի իրացման հետ կապված հարաբերություններում դատավորի՝ իր զբաղեցրած վերջին պաշտոնում ստացած աշխատավարձին՝ կենսաթոշակի չափը հնարավորինս մոտ սահմանելու միջազգայնորեն ընդունված սկզբունքը: Մեկ այլ՝ 2019 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1463 որոշմամբ, ի թիվս այլնի, նաև փաստել է, որ կախված դատավորի վարձատրության չափից՝ կենսաթոշակի չափի որոշման անհրաժեշտությունը դատավորների անկախության սոցիալական երաշխիքների կարևոր բաղադրատարր է, և դատավորները պետք է ապահովված լինեն օրենքով սահմանված համարժեք այնպիսի կենսաթոշակով, որը պաշտոնավարման ամբողջ ընթացքում զերծ կպահի նրանց կողմնակի ազդեցությունից:

Ուստի, օրենքով հավելավճարի սահմանմամբ կերաշխավորվի Սահմանադրական դատարանի դատավորների նկատմամբ իրենց բարձր կարգավիճակին և իրենց կատարած աշխատանքին համարժեք վերաբերմունքը:

3. Կարգավորման նպատակը, ակնկալվող արդյունքները.

Նախագծերով առաջարկվող լրացումների և փոփոխությունների պայմաններում օրենսդրորեն կվերանայվեն սոցիալական և նյութական անկախության լրացուցիչ երաշխիքները Սահմանադրական դատարանի դատավորների համար, որի արդյունքում Սահմանադրական

դատարանի նախագահին, փոխնախագահին և դատավորներին Օրենքով սահմանված կարգով կվճարվի նրանց բարձր կարգավիճակին և պատասխանատվությանը համապատասխան՝ **դատավորի պաշտոնում աշխատանքային ստաժի համար հավելավճար հետևյալ չափերով՝**[1]

- պաշտոնավարման երկրորդ տարում՝ 20 տոկոսի չափով,

- երրորդ տարում՝ 35 տոկոսի չափով,

- չորրորդ տարվանից սկած յուրաքանչյուր հաջորդ տարում՝ նախորդ տարվա համար նախատեսված հավելավճարի չափից 10 տոկոս ավել չափով:

Ընդ որում, ««Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի անցումային դրույթի ուժով քննարկվող հավելավճարի հաշվարկման համար հաշվի են առնվելու օրենքն ուժի մեջ մտնելու պահի դրությամբ Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնում աշխատած լրիվ տարիները:

Ըստ այդմ, այն հաշվառմամբ, որ Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասի ուժով՝ Սահմանադրական դատարանի դատավորներն ընտրվում են 12 տարի ժամկետով, աշխատանքային ստաժի համար վերը նշված հավելավճարը հաշվարկվելու է առավելագույնը 11 տարվա համար, յուրաքանչյուր տարվա համար հետևյալ տրամաբանությամբ.

Սկսած Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնում **պաշտոնավարման երկրորդ տարվանից (նկատի առնելով, որ համապատասխան հաշվարկի հիման վրա համապատասխան գումարը վճարվելու է պաշտոնավարման երկրորդ տարին մեկնարկելուց)՝ 20 տոկոսի չափով՝**

Սահմանադրական դատարանի նախագահ, փոխնախագահ, դատավոր՝ հիմնական աշխատավարձի 20 տոկոս (ամսական) X 12 ամիս.

Սահմանադրական դատարանի նախագահի, փոխնախագահի, դատավորի պաշտոնում **պաշտոնավարման երրորդ տարվանից՝ 35 տոկոսի չափով՝**

Սահմանադրական դատարանի նախագահ, փոխնախագահ, դատավոր՝ հիմնական աշխատավարձի 35 տոկոս (ամսական) X 12 ամիս.

Սահմանադրական դատարանի նախագահի, փոխնախագահի, դատավորի պաշտոնում **պաշտոնավարման չորրորդ տարվանից և հաջորդիվ**՝ 45, 55, 65, 75... այսինքն՝ պաշտոնավարման չորրորդ տարվանից սկսած յուրաքանչյուր տարի կավելանա արդեն 10 տոկոս)՝

Օրինակ՝ չորրորդ տարվանից՝

Սահմանադրական դատարանի նախագահ, փոխնախագահ, դատավոր՝ հիմնական աշխատավարձի 45 տոկոս (ամսական) X 12 ամիս:

Նույն տրամաբանությամբ էլ պետք է կատարվի հաշվարկը մինչև պաշտոնավարման ավարտը:

---

[1] Վարձատրության բարեփոխումների հետագա արդյունքներով Սահմանադրական դատարանի նախագահի, փոխնախագահի, դատավորների հիմնական և լրացուցիչ աշխատավարձերը բարձրանալու պարագայում նշված նախագծով առաջարկվող կարգավորումները ենթակա են վերանայման:

Հարկ է նաև նշել, որ Սահմանադրական դատարանի նախագահին, փոխնախագահին և դատավորին Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնում աշխատանքային ստաժի համար վճարվելիք գումարի չափի հաշվարկման մասով **մեկնակետը Սահմանադրական դատարանի նախագահի, փոխնախագահի, դատավորի պաշտոնը ստանձնելու պահն է օրինակ՝ եթե Սահմանադրական դատարանի դատավորը պաշտոնը ստանձնել է 2020 թվականին, համապատասխան գումարի հաշվարկման/վճարման համար որպես մեկնակետ ընդունվում է նրա պաշտոնը ստանձնելու պահը):**

3.2. Միաժամանակ, Օրենքի 12-րդ հոդվածի **2-րդ մասում նոր լրացվող՝** Սահմանադրական դատարանի նախագահի, փոխնախագահի և դատավորի պաշտոններում պաշտոնավարման ընթացքում աշխատանքային ստաժի համար վճարվելիք **հավելավճարների** վերաբերյալ օրենսդրական կարգավորումների պայմաններում «հավելում» և «հավելավճար» եզրույթների մասով օրենսդրական մակարդակում ամրագրված մյուս մոտեցումների միասնականացմամբ պայմանավորված, անհրաժեշտ է նաև վերանայել Օրենքի 12-րդ հոդվածի **1-ին մասում կիրառվող «հավելավճար» եզրույթը** (այն փոխարինել «հավելում» բառով): Մասնավորապես, Օրենքի, այդ թվում՝ 12-րդ և 13-րդ հոդվածների իրավակարգավորումների համեմատության արդյունքում պարզ կդառնա, որ Սահմանադրական դատարանի նախագահի, փոխնախագահի և դատավորի մասով հիշատակված է վճարվող **հավելավճարի** մասին՝ պաշտոնային դրույքաչափի 80 տոկոսի չափով, իսկ, օրինակ, Վճռաբեկ դատարանի դատավորների (այդ թվում՝ Վճռաբեկ դատարանի նախագահի և վճռաբեկ դատարանի պալատի նախագահի) մասով՝ տրվող **հավելման** մասին՝ պաշտոնային դրույքաչափի 50 տոկոսի չափով):

4. Իրավական ակտի նախագիծը մշակող պատասխանատու մարմինը, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, նախաձեռնողի, հեղինակների և մշակմանը մասնակցող անձանց մասին տեղեկություններ.

Նախագծերը մշակվել են Արդարադատության նախարարության կողմից:

5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ.

Նախագծերի ընդունումը բխում է Կառավարության 2021-2026թթ. ծրագրի 6.3-րդ կետից: Մասնավորապես, «Հանրային ծառայության համակարգ և մարդկային ռեսուրսների կառավարում» վերտառությամբ 6.3-րդ կետով ի թիվս այլ քայլերի՝ Կառավարության կողմից նախաձեռնման ենթակա քայլերից է հանրային ծառայության գրավչությունը բարձրացնելու ուղղությամբ առանցքային բարեփոխումների իրականացումը, ներառյալ վարձատրության ու պարգևատրման համակարգերի վերանայումը, (…) գրավչությունը մեծացնող աշխատանքային միջավայրի ձևավորումն ու պայմանների ներդրումը («Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնը՝ որպես անկախ պետական

մարմնի անդամի պաշտոն, հանդիսանում է ինքնավար պաշտոն, որն էլ ընդգրկվում է հանրային ծառայության մաս կազմող հանրային պաշտոնների մեջ):